

 <p><b>ԱՂՐՈՒՒՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ</b>          Հայաստանի ազգային ագրարային համալսարան          AGRISCIENCE AND TECHNOLOGY    АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ</p>	<p>Միջազգային գիտական պարբերական</p> <p><b>ISSN 2579-2822</b></p>	
--	---	---

Կայքէջ՝ [anau.am/hy/teghkekagir](http://anau.am/hy/teghkekagir)

ՀՏԴ 636.22/28.034

### ԼԻՏՎԱՅԻՑ ՆԵՐԿՐՎԱԾ ՀՈԼՇՏԻՆ ՑԵՂԻ ԿՈՎԵՐԻ ԿԱԹՆԱՅԻՆ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

**Լ.Մ. Մինասյան գ.գ.դ., Ա.Խ. Սիմոնյան գ.գ.թ.**

*Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն*

**Տ.Ժ. Չիթչյան գ.գ.թ., Ժ.Տ. Չիթչյան գ.գ.թ.**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարան*

[levon.minasyan.1950@mail.ru](mailto:levon.minasyan.1950@mail.ru), [armenisim1@gmail.com](mailto:armenisim1@gmail.com), [tchitchyan@yahoo.com](mailto:tchitchyan@yahoo.com), [zh\\_chitch@yahoo.com](mailto:zh_chitch@yahoo.com)

#### Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Բանալի բառեր՝**

*կով,  
լակտացիա,  
կաթնատվություն,  
կաթում յուղի և սպիտակուցի  
պարունակություն,  
կենդանի զանգված*

#### Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Լիտվայից ներկրված և ՀՀ Լոռու մարզի «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ տնտեսության տիպային կովանոցներում պահվող հոլշտին ցեղի առաջնածին կովերի կաթնատվությունը կազմել է 6570 կգ, կաթում յուղի պարունակությունը՝ 4,2 %, սպիտակուցինը՝ 3,32 %, կենդանի զանգվածը՝ 542 կգ, իսկ կաթնատվության գործակիցը՝ 12,1:

Ըստ բնիտավորման հրահանգի՝ ներկրված կովերը կաթնատվությամբ, կաթում յուղի և սպիտակուցի պարունակությամբ, ինչպես նաև կենդանի զանգվածով զգալիորեն գերազանցել են հոլշտին ցեղի ստանդարտը, ինչպես նաև Լիտվայում բուծվող իրենց մայրերին: Ոխտի առաջարկում ենք շարունակել դրանց ներկրումը և հետագա բուծումը:

#### Նախաբան

Հայաստանում անասնաբուծության առաջատար ճյուղը տավարաբուծությունն է. արտադրվող կաթի 95 %-ից և մսի 60 %-ից ավելին ստացվում է այս ճյուղից: Քանի որ տավարաբուծության հեռանկարային զարգացման նպատակով վերջին տարիներին մի շարք ծրագրերի շրջանակներում եվրոպական տարբեր երկրներից ներկրվել են տավարի հոլշտին, շվից, սիմենթալ և ջերսեյ ցեղերի երինջներ, ուստի հետագա ներկրման և բուծման արդյունավետության որոշման համար անհրաժեշտ է ուսումնասիրել այդ կենդանիների կենսաբանատնտեսական հատկանիշները և ստացված արդյունքների հիման վրա կատարել համապատասխան եզրակացություններ:

#### Նյութը և մեթոդները

Ոխումնասիրությունները կատարվել են ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գտնվող «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ տնտեսության տիպային կովանոցներում: Լիտվայից ներկրված հոլշտին ցեղի առաջին լակտացիայի կովերն այստեղ պահվում են շուրջտարյա մսուրային համակարգով, անկապ-բոքսային պահվածքի եղանակով: Կովերին կերակրում և կթում են օրական երկու անգամ: Կերի տարեկան ծախսը 1 գլուխ կովի հաշվով կազմում է 50-52 g կերամիավոր:

Լիտվայից ներկրված հոլշտին ցեղի 100 գլուխ առաջին լակտացիայի կովերի կաթնային մթերատվությունն ուսումնասիրելու նպատակով 2017-2019 թթ. ընթաց-

քում կաթնատվությունը լակտացիայի 305 օրում որոշվել է ստուգիչ կիթերի միջոցով, կաթում յուղի և սպիտակուցի պարունակությունը՝ «Էկոմիլկ» սարքով, իսկ կենդանի զանգվածը՝ կշռումների միջոցով: Հաշվարկվել են կովերի կաթնատվության գործակիցը (կաթնատվության և կենդանի զանգվածի հարաբերակցությունը), ինչպես նաև կաթնատվության, կաթում յուղի և սպիտակուցի պարունակության ժառանգելիության գործակիցները, իսկ ներկրված կենդանիների գենետիկական ներուժի դրսևորման աստիճանը որոշելու համար կաթնային մթերատվության ցուցանիշները համեմատվել են դրանց մայրերի նույն ցուցանիշների հետ:

**Արդյունքները և վերլուծությունը**

Հոլշտին ցեղի առաջին լակտացիայի կովերի կաթնային մթերատվության ցուցանիշների և կենդանի զանգվածի ուսումնասիրման արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Ըստ աղյուսակի տվյալների՝ կովերի կաթնային մթերատվությունը և կենդանի զանգվածը բավական բարձր են. միջին կաթնատվությունը լակտացիայի 305 օրում կազմել է 6570 կգ, կաթում յուղի պարունակությունը՝ 4,2, իսկ սպիտակուցինը՝ 3,32 %, կենդանի զանգվածը՝ 542 կգ: Պարզվում է, որ Լիտվայից ներկրված հոլշտին ցեղի կովերն առաջին լակտացիայում ցուցաբերել են հանրապետության համար ռեկորդային բարձր կաթնատվություն:

«Կաթնատու և կաթնամսատու ցեղերի տավարի բուհ-տավորման հրահանգով» (1990 թ.) այս կովերը կաթնատվությամբ գերազանցել են ցեղի ստանդարտը 2370 կգ-ով կամ 56,4 %-ով, կաթի մեջ յուղի և սպիտակուցի պարունակությամբ՝ 0,6 և 0,12 %-ով, իսկ կենդանի զանգվածով՝ 62 կգ-ով կամ 13,0 %-ով:

Լիտվայից ներկրված հոլշտին ցեղի կովերի բարձր գենետիկական ներուժի մասին է վկայում նաև այն փաստը, որ շատ կովերի կաթնատվությունն առաջին լակտացիայում գերազանցել է 7000 կգ-ը, իսկ կաթի յուղայնությունը՝ 4,0 %-ը: Այսպես՝ հետազոտված 100 գլուխ կովերից 45-ի կամ 45 %-ի կաթնատվությունը 7000 կգ-ից բարձր է, և միջինը կազմել է 7794 կգ: 32078 և 60940 համարների կովերի կաթնատվությունը կազմել է 8700 կգ, յուղայնությունը՝ 4,25 և 4,06 %, իսկ 45575 համարի կովի կաթնատվությունը՝ 9290 կգ, յուղայնությունը՝ 4,21 %:

Ըստ աղյուսակի՝ ներկրված կովերի կաթնատվության գործակիցը ևս բավական բարձր է. միջինը՝ 12,1 (տատանումները՝ 6,6-15,7), այսինքն՝ հետազոտվող կովերը դասվում են տիպիկ կաթնատու ցեղին:

Տարբեր երկրներ ներկրված հոլշտին ցեղի կենդանիների բուծման դրական արդյունքներին անդրադարձել են՝ Հայաստանում Լ.Մ. Մինասյանը և ուրիշներ (2011, 2014), Դ.Ս. Նավասարդյանը (2014), Ռուսաստանում՝ Վ.Վ. Լյաշենկոն և ուրիշներ (2013), Իսրայելում՝ Ն. Գալոնը և ուրիշներ (2011), մի շարք այլ հետազոտողներ:

**Աղյուսակ.** Հոլշտին ցեղի առաջին լակտացիայի կովերի և դրանց մայրերի կաթնային մթերատվության ցուցանիշները «Ագրո-հոլդինգ Արմենիա» ՍՊԸ-ում\*, n=100

Խմբերը	Կենսաչափական պարամետրերը	Կիթ 305 օրում, կգ	Կաթի յուղայնությունը, %	Կաթում սպիտակուցի պարունակությունը, %	Կաթնատու, կգ	Կաթնատուի յուղայնությունը, կգ	Կենդանի զանգվածը, կգ	Կաթնատվության գործակիցը
Դուստրեր	Lim	3360-9290	3,9-4,47	3,1-3,56	144-391	113,6-317,0	500-590	6,6-15,7
	M±m	6570±145	4,20±0,01	3,32±0,01	276,0±5,9	218,0±4,7	542±2,11	12,1±0,24
	σ	1448	0,13	0,10	58,9	47,0	21,1	2,4
	Cv	22,0	3,1	3,0	21,3	21,6	3,9	20,0
Մայրեր	Lim	4135-7850	3,7-4,35	3,12-3,52	153-312	118-262	480-560	7,3-14,5
	M±m	5840±170	3,95±0,02	3,25±0,01	231±7,8	190±6,5	510±9,5	11,5±0,45
	σ	1355	0,21	0,12	52,0	39,0	44,8	2,0
	Cv	23,2	5,2	3,7	22,5	20,6	8,8	18,2
Տարբերությունը ±		+730,0	+0,25	+0,07	+45,0	+28,0	+32,0	+0,6

\* Կազմվել է «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ կողմից տրամադրված տվյալների և հեղինակների հետազոտությունների հիման վրա:

Ներկրված կենդանիների գենետիկական ներուժի դրսևորման աստիճանը որոշելու համար կաթնային մթերատվության ցուցանիշները համեմատվել են Լիտվայում բուծվող դրանց մայրերի նույն ցուցանիշների հետ: Ըստ աղյուսակի տվյալների՝ հետազոտվող կովերը կաթնատվությամբ գերազանցել են իրենց մայրերին 730 կգ-ով կամ 12,5 %-ով, կաթի մեջ յուղի և սպիտակուցի պարունակությամբ՝ 0,25 և 0,07 %-ով, կաթնայուղի և կաթնասպիտակուցի քանակությամբ՝ համապատասխանաբար 45 և 28 կգ-ով կամ 19,5 և 14,7 %-ով, իսկ կենդանի զանգվածով՝ 32 կգ-ով կամ 6,3 %-ով:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ներկրված հոլշտին ցեղի կովերը 1-ին լակտացիայի կաթնային մթերատվության բոլոր ցուցանիշներով և կենդանի զանգվածով զգալիորեն գերազանցել են իրենց մայրերին:

Կաթնատու տավարաբուծությունում արդյունավետ սելեկցիոն աշխատանքներ իրականացնելու համար կարևոր է նաև որոշել սելեկցվող հատկանիշների ժառանգելիության գործակցի մեծությունը, քանի որ այդ մեծությամբ է պայմանավորված սելեկցիայի արդյունավետությունը:

Կատարված հաշվարկների համաձայն՝ հետազոտվող կովերի կաթնատվության ժառանգելիության գործակիցը ( $h^2$ ) կազմել է 0,25, իսկ կաթի յուղայնության ու սպիտակուցայնության գործակիցները՝ համապատասխանաբար 0,42 և 0,53:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ կաթնային մթերատվության ցուցանիշների ժառանգելիության գործակիցների մեծությունները գտնվում են ընդունված նորմաների սահմաններում և կարող են օգտագործվել տնտեսության սելեկցիոն աշխատանքներում:

### Եզրակացություն

Լիտվայից ներկրված հոլշտին ցեղի առաջին լակտացիայի կովերի կաթնատվությունը և կենդանի զանգվածը «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ տնտեսության պայմաններում շատ բարձր են և զգալիորեն գերազանցում են հոլշտին ցեղի ստանդարտները: Դրանք

կաթնատվությամբ, կաթի մեջ յուղի և սպիտակուցի պարունակությամբ, կաթնայուղի և կաթնասպիտակուցի քանակությամբ ու կենդանի զանգվածով նույնպես զգալիորեն գերազանցել են Լիտվայում բուծվող իրենց մայրերի նույն ցուցանիշները, իսկ կաթնատվության, կաթում յուղի և սպիտակուցի պարունակության ժառանգելիության գործակիցները ( $h^2$ ) համապատասխանաբար կազմել են 0,25, 0,42 և 0,53:

Այսպիսով՝ առաջարկում ենք շարունակել տավարի հոլշտին ցեղի կենդանիների ներկրումը Լիտվայից և հետագա բուծումը Հայաստանի՝ կերակրման և պահպանման համապատասխան պայմաններ ունեցող տնտեսություններում:

### Գրականություն

1. Մինասյան Լ.Մ., Խեչոյան Ա.Ռ., Չիթչյան Տ.Ժ. Ավստրիայից ներկրված հոլշտին ցեղի կովերի մթերատվությունը Հայաստանի Հանրապետության նախալեռնային գոտու պայմաններում // Ագրոգիտություն. - Եր., 2011. - N 7-8. - Էջ 381-384:
2. Նավասարդյան Դ.Ս. Հանրապետություն ներկրված շվից, հոլշտին և սիմենթալ ցեղերի կովերի կաթնային մթերատվության համեմատական ուսումնասիրությունը Լոռու մարզում // Ագրոգիտություն. - Եր., 2014. - N 11-12. - Էջ 598-601:
3. Минасян Л.М., Симонян А.Х., Хечоян А.Р., Читчян Ж.Т. Молочная продуктивность коров голштинской породы, завезенных из Австрии и Германии, в условиях ООО «Агрохолдинг Армения» // Известия НАУА. - 2014. - N 4. - С. 46-49.
4. Ляшенко В.В., Ситникова И.В. Молочная продуктивность и качество молока голштинских коров-первотелок разной селекции // Зоотехния. - 2013. - N 3. - С. 18-19.
5. Galon, N., Zeron, V., Esar, E. (2010). Factors affecting fertility of dairy cows in Izrael // The journal of Reproduction and Development. - N 56, - pp. 8-14.

**АННОТАЦИЯ****Молочная продуктивность коров голштинской породы, завезенных из Литвы, в условиях Армении**

Проведенные нами исследования показали, что удой завезенных из Литвы коров голштинской породы, содержащихся в типовых коровниках ООО «Агрохолдинг Армения» в Лорийском марзе РА, за первую лактацию составил 6570 кг, содержание жира и белка в молоке – соответственно, 4,2 % и 3,32 %, живая масса - 542 кг, а коэффициент молочности - 12,1 .

Эти коровы по удою, жирности и белковости молока, а также по живой массе значительно превосходили стандарты голштинской породы, предусмотренные инструкцией по бонитировке крупного рогатого скота молочных и молочно-мясных пород, а также превосходили своих матерей, разводимых в Литве. Так что рекомендуем продолжать их ввоз и дальнейшее разведение.

**ABSTRACT****Milk Productivity of Holstein Cows Imported from Lithuania in Armenia**

The milk yielding capacity of the first- calf Holstein cows imported from Lithuania and kept in the specific cowsheds of the “Agroholding Armenia” LLC farm at the Lori region, RA, has made 6570 kg, the milk fat content - 4.2 %, protein - 3.32 %, live weight - 542 kg and the milk productivity coefficient - 12.1.

According to the bonitization instructions the imported cows have considerably surpassed the standard indices of the Holstein breed, as well as their mothers bred in Lithuania in terms of milk productivity, fat and protein content, as well as in that of live weight. Thus, there is a feasibility for their further import and breeding.

Ընդունվել է՝ 20.06.2019 թ.  
Գրախոսվել է՝ 04.11.2019 թ.